

**«Հայաստանի Հանրապետության կառավարության
1999 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 670 որոշման
մեջ փոփոխություններ և լրացում կատարելու
մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

--- հոկտեմբերի 2017 թվականի N - Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 1999 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 670 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ ՀՀ կառավարությունը որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի հոկտեմբերի 26-ի «1975 թվականի միջազգային ճանապարհային փոխադրումների կոնվենցիայի կիրարկումն ապահովող որոշ միջոցառումների մասին» թիվ 670 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝
 - 2-րդ կետում «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարություն» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե» բառերով:
 - 3-րդ կետում «փոխադրագրքային կներվի միջազգային փոխադրումներ իրականացնելու» բառերից հետո լրացնել «ու տրանսպորտային միջոց մաքսային կապարակների և կնիքների կիրառմամբ ապրանքների փոխադրման համար օգտագործելու» բառերը և «Հայաստանի Հանրապետության տրանսպորտի նախարարության, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարության» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության ու

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր
պետական եկամուտների կոմիտեի» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը
հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՐԶԱՊԵՏ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՐԵՆ